

Գանձապետի մօտ կայ պատրաստի
գումար դրամոց 5 62 1/2

Ընդ ամեն գումարն է 1527 92

Նախագահ	Թադէոս Ա. քհնյ. Բուզադեանց
Հոգաբարձուք	Յակովբ Աղամեանց
	Մուսայէլ Շահեկեանեանց
	Բաղդասար Սարգիսեանց
	Խաչատուր Կիրիեանց
Գանձապետ	Գրիգոր Դիլգարեանց

ՍՈՒՐՀԱՆԳԱԿԻ ԲՈՒՋԱՆԳԵԱՆ.

ՎԱՆՔԻ ԵՌՆԱԳԱՍԿԸ ՀԱՅԳ

Ակնայ Վանք զիւղի Հայայոյն վարժարանին
հարցաքննութեան վրայ հետեւեալ տեղեկութիւն-
ները կը հարորդեն մեզ ի հրատարակութիւն, զոր
կը հրատարակենք ի գիտութիւն ազգայնոց և ի
քաջակերտութիւն աշակերտաց, շնորհակալ ըլլա-
լով Մեծ. Եանքօ էֆ. Եանքօեանէն՝ որ ազգասի-
րաբար փութալով յիշեալ վարժարանի հոգա-
բարձութիւնն ու խնամակալութիւնն ընդունելու,
մեծ յոյս կուտայ քիչ ժամանակէն յիշեալ Հա-
յայոյն հասարակութեան՝ բուն իսկ իւր ազգայ-
նութիւնը համարուող հանգամանաց տիրանալու:

Ահաւասիկ նամակին օրինակը:

«Նախընթաց կիւրակէ Յուլիս 28 զիւղիս Ս.
Գէորգ եկեղեցւոյ վարժարանիս աշակերտաց Յու-
նարէն և Հայերէնի տարեկան հարցաքննութեան
հանդէսը կատարեցաւ ընդ նախագահութեամբ
Գեորգ Իսկօֆօս սրբազանի և մաքրակրօն Ֆիլօ-
թէոս հօր և ի ներկայութեան զիւղիս Մեծ. Տեարց
և ժողովրդոց. քննիչ կանչուած էին Մուրատեան
Խորով, Դերձակեան Աղարիա և Գրիգորեան
Յակօր էֆ ները դպրոցին Հոգաբարձու Մեծ.
Եօրտան էֆ ի հրաւիրանօք, որք գալով քննեցին
Յունարէն և Հայերէն դասերը աշակերտք ինչ
աստիճան յաջողակ ըլլալնին պատմելը մեզ չը-
պատկանելուն՝ կը թողում հոգաբարձութեան և
ներկայիւր. քննութիւնը սկսաւ առաւօտեան ժամ
1 ին և տեւեց ժամ 6: Աղարիա էֆ Դերձակեանը
իւր շնորհակալութիւնը և զգացումը յայտնելով,
հակիրճ ատենախօսութիւն մ'ըրաւ աշակերտաց

ուղղեալ. անկէջ քննիչք մեկնեցան գնալու Հո-
գաբարձու Եօրտան էֆէնտիին տունը, ուր ի պա-
տիւ քննչաց լաւ կերպով հացկերոյթ մը պատ-
րաստած էր յիշեալ էֆէնտիին:

Հոգաբարձու Եօրտան էֆ ին կրած ազգասի-
րական եռանդն ալ արդարեւ անուրանալի է.
կաշխատի բաւական զիւղիս մանկտեաց յառաջ-
դիմութեան և ըստ կանոնի դասատուաց պաշտօնը
վարել տալու, որք թէպէտ ինքնին կզգան իրենց
պարտաւորութիւնը. ուստի ներեցէք ինձ որ ձեր
ներկայութեան ալ մատուցանեմ յիշեալ էֆէն-
տիի իմ խորին շնորհակալիքս:

Մ'նամ և ըն.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՊՕՂՈՍԵԱՆ
Գասատու վանուց վարժարանիս
Օրագիր Թ. 1525.

ՀԱՆԳՈՒՅԵԱՆ, ԿԱՐՈՊԵՏ ԳՍՐԱԿԷՕՁԵԱՆ.

Շարձ առաւօտ (Հոկտ 41). կանուխ ըստ սո-
վորութեան թերթերնիս մամուլը դրուած միջոցին՝
իմանալով մեծ. Կարապետ էֆ. Քարակէօղեանի մա-
հը, համառօտիւ մը ծանուցինք զայն մեր ընթերցո-
ղաց:

Պարապետ էֆէնտիի այս տարածամ մահը մեծ
ցաւ պատճառեց ամեն կարգի ազգայնոց:

Սա տակաւին երիտասարդ 33 տարեկան հասա-
կին մէջ ունէր ժամանակին պահանջած ամեն բա-
րեմաննութիւն, հարստութիւն, տաղանդ, հմտութիւն,
բարեբարոյ վարք. այս ամենը կային հանգուցելոյն
վրայ, որով ապագային մէջ մեծ յոյսեր կը տածէր
ազգը իւր վերայ. սակայն անազորոյն մահն ամեն
յոյս ի դերեւ հանեց:

Սա իւր բազմազգազ վիճակին մէջ ազգային բա-
ւական պաշտօններ վարեց, երեսփոխան, ընդհ. ժո-
ղովոյ ատենապետ, քաղաքական ժողովոյ, Վերաքըն-
նիչ յանձնաժողովոյ եւ հարստահարութեանց Յանձնա-
խմբի անդամ էր, իւր ամեն պաշտօններուն մէջ միշտ
խղճի մտօք ծառայած եւ իւր ընկերաց համարումը
զրուած էր: Քաց ասոնցմէ, Սամաթիոյ, Նաուր-
Գաբուլի աղբատիկ վարժարանին բարերարաց մին
էր եւ անոնց նիւթական վիճակին օգնելէն զատ, բա-
րոյսպէս ալ կօզնէր իւր վրայ պահելով սնօրէնու-
թեան պաշտօնը:

Խր գործին մէջ միշտ Հայ պաշտօնեայնք կը գործածէր, միանգամայն բարեկիրթ եւ քիչ շատ լե՛ գուաղիտութիւն ունեցող ազգային երիտասարդաց գործ գտած է վաճառականական շրջանին մէջ:

Հանգուցելոյն յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ կիրակի օր Խսկիւտար:

Հանդիսին առջեւէն կերթային մէկ քանի ոստիկաններ, անոնցմէ ետքը բազմամիւ դպիր տղայք, 80 ի մօտ քահանայ, 20 ի մօտ վարդապետ, երեք եպիսկոպոստներ՝ եւ Ս. Պատրիարքը ետեւէն մէկ քանի վարդապետներ առանց շուքառի:

Ասկէ ետքը կուգար չորս ծիով կառք մը՝ որ կը կրէր դազաղը. ծիերն սեւով պատած էին. Ճակատին ունենալով մէկ մէկ ծանր փետուր, ինչպէս նաեւ բոլոր կառապաններն սեւեր հողած էին, որոց իւրաքանչիւրը մէկ մէկ ծի բռնած էր:

Ասկէ ետքը կուգար հայազգի եւ օտարազգի վաճառականաց խումբը, որոց շատերն ի նշան սզոյ մոմեր բռնած էին եւ թեւերնին թիւլով կապած, ասոնց կը յաջորդէր յուղորկաւորաց հազարաւոր բազմութիւն մը եւ ՅՕ էն աւելի կառք:

Ս. Պատրիարքը խիստ սրտառուջ դամբանական մը խօսեցաւ:

Յետոյ դազաղը խուռն բազմութեամբ կառքերու յատուկ շողենաւով եւ 25 ի մօտ կառքերով ու խուռն բազմութեամբ Քապաթաշ բերուեցաւ, ուր Եւրոպացի սեզանաւորք եւ վաճառականք դիմաւորելու եկած էին. եւ անկէ տարուեցաւ ծանր հանդիսիւ Ֆէրի - Գիւղ իրենց յատուկ դամբանարանը:

Հանգուցեալը երկու արու որք զաւակ թողուց, մէկը Յ եւ միւսն մէկուկէս տարեկան հասակի մէջ, որոց ինչպէս նաեւ աղնիւ Տիկին Քարակէօզեանի՝ երկար կեանք բարեմաղթելով կը կը կնքենք յօղումանիս:

Օրագիր 1565, Հոկտ. 16:

ՇՆՈՐՀԱՒՈՐ.

Շարած օր. ինչպէս նոյն օրը ծանուցինք, Մէզահիպի դիւանին Միւսէիզ Սէրվէթ էֆէնտի Գոււմդարույի Պատրիարքարանը գալով, Մեծ Եպարզոսին եւ Աբասյին գործոց պաշտօնէի կողմանէ Ամեն. Ներսէս Սրբազան Պատրիարքին տօնախմբութիւնը շնորհաւորեց, յայտնելով միանգամայն որ թէ Բարձր:

Մեծ Եպարզոսին եւ թէ Արիֆի բաշային անկեղծ իղմն ու փափարն է՝ զՆ. Սրբազնութիւնը, իւր Ազգին եւ Տէրութեան մատուցած հաւատարիմ ծառայութիւններն ծանօթ ըլլալով, տակաւին երկար ժամանակ իւր սոյն պաշտօնին վրայ տեսնել: Որոյ ի պատասխանի Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն ալ իւր առ մեծազօր Տէրութիւնն եւ առ Նորին բարձրատիւ պաշտօնեայս, առ ինքն վկայեալ սոյն համակրական զգացմանցը նկատմամբ՝ ունեցած խորին եւ երախտաղիտական շնորհակալութիւնը յայտնեց: Սոյն պաշտօնական շնորհաւորութեան այցելութիւնը, որ առաջին անգամն է տեղի կունենայ, եւ պաշտօնէին առ Սրբազան Պատրիարք Հայրն ուղղեալ սիրալիր խօսքերն Ն. Սրբազնութեան տէրութեան պաշտօնէից մօտ ունեցած բարձր համարման եւ արժանեաց անսուտ մէկ գրաւականը կը համարուին:

Օրագիր թիւ 1564, Հոկտ. 15:

ՅԱՆՉՆԱԺՈՂ ՈՎ ԳԹՈՒԹԵԱՆ

ՍՈՎՈՍԱՆՋ ՀԱՅՈՑ

ՓՈՔՈՆ ԱՍՒՈՑ

Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հօրմարդասիրական եւ ազգասիրական զթոտ սրտին եւ զգացմանց մի արգասիքն է Գթութեան Յանձնաժողովոյ կազմութիւնը, որ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ մէջ Նորին Սրբազնութեան գաւառարնակ ազգայնոց բազմաց ներկայ աղետալի վիճակի ծանուցմամբն եւ ազգու յորդորանօքն ծնունդ առաւ:

Բերկրութեամբ սրտի կլսելք թէ Գթութեան Պատուարժան Յանձնաժողովն փութաջանութեամբ նեղելոց օգնութեան համար հարկ եղած միջոցներն ձեռք առած կզործէ, մի կողմանէ պաշար եւ ուտեստ կպատրաստէ սովկոց. եւ միւս կողմանէ Հանգանակութեան գործն յառաջ կտանի, որ ցարդ 2000 *) լիւրայի հասած է կլսուի:

Գովութեան եւ շնորհակալեաց արժանի է Գթութեան Յանձնաժողովոյ Մեծապատիւ Անդամոց «Նախ անէլ և ապա անուցանէլ» այն գովից սկզբունքն ալ՝ որ իրենք աղքատասէր ազ-

(*) 14000 ժանէթի շաֆ:

գայնոց օրինակ ըլլալու համար՝ նախ և առաջ մեծ մասամբ իւրաքանչիւրն 100ական և 150ական ոսկի գրուած են Հանգանակութեան :

Յանձնաժողովոյ Մեծապատիւ անդամք որք են՝ Նորատունկեան, Մագսուտեան, Մանիկեան, Կիւլպէնկեան, Հալաճեան, Փափաղեան, Կիւմիշեան, Եսայեան Կիւմիշկերտանեան, Քիւրքճիւլպաշեան, Միրասեկտեան, Մերեմիզուլեան և Իկիտպաշեան էֆէնտիներն, արդէն ընդհանուր (*) Ազգին ծառայող սիրելի և վտասհիշի անձինք են. նոցա փութաջանութեան և գործունէութեան հետ՝ իբր Ազգին մի յետին եկեղեցականն մեր յորդորներն ալ կրկցենք և կիսորներ մեր աղքատասէր և զժող ազգայիններէն՝ որ յօժարակամ գտնուին աջակից և գործակից լինել Գթութեան Յանձնաժողովոյ մեծ գործին :

Ամեն Հայ՝ որ իր քսակին մէջ հինգ պղինձ դրամ ունի՝ թող յօժարի մին կամ երկուսն Յանձնաժողովոյ տալ և հաւատալ թէ իր երկու դահեկանովն մի սովատանջ Հայ պիտի ապրեցնէ :

Կրկին շնորհակալեաց արժանի է նաև Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հօր այս մասին Յանձնաժողովոյ հ'տ յառաջ տարած ջանքն, որ Կարնոյ, Պրուսայի, Իգմիւռնոյ, Նիկոմիդիոյ, Ռոտտութոյի Առաջնորդ Ս. Հարց կրկին գրեր գրել տուած է, որ անմիջապէս Հանգանակութիւն մը բանալով՝ եղած արդիւնքն Յանձնաժողովոյ առաքեն :

Նոյնպէս Զրարատեան Մայր Աթոռոց Աստուածարեալ Սրբազան Հայրապետին հետագիր*) քաշելով՝ Ասիոյ սովորոց աղէկտուր վիճակն ծանուցեր և Նոյին Աեհափառութեան Հայրական գրութիւնը խնդրեր է Բարիոյս եմք՝ որ Ռուսաստանի մէջ եզոզ մեր սիրելի ազգայինք ևս կը փութան իրենց ձեռնտուութիւնն ընել, և այս միջոցներով թերևս կարելի ըլլայ դրամական մեծագումար հաւաքում մը գոյացնել և այնու հոգալ տառապելոց կենաց սնունդը :

Լոյս, Թիւ 11, Նոյեմբ. 1.

(*) Այս հեռագիրն ի ժամանակին հասաւ Վեհ. Հայրապետին, որ և առայժմ կարելի եղած ձեռնտուութիւնք փութաց հասուցանել 500 ուսուրի նպատ յղելով առ Գեր. Ս. Պատրիարքն Կ. Պոլսոյ յանուն սովելոց :

4000 Լ. Ռ. Ս. Յ. Ն. Ո. Ի. Ե. Բ.

Պօլսոյ Պատրիարքարանի ի բազմաց հետէ բարդուած պարտքը ոչ միայն բաւական յուզմանց, այլ և տեղական Ազգային գործոց և Պատրիարքարանի և վարչութեան զբամական նեղ վիճակին և յամր ընթացից առիթ կը տար, զոր երևելի երկու Ազգայինք մեր նուիրատուութեամբ վճարելով՝ մեծ բարեգործութիւն կատարեցին :

4000 լիւրան՝ 28 հազար մանէթի չափ գումար կը ունէ :

Այս առթիւ հետեւեալը կ'օրինակուիք Մասիսէն :

«Գոհութեամբ կիմանանք թէ Կեդրոնական սրտուակին 4000 լիւրայի չափ պարտքը հասուցանելու համար Վսեմ. Աբրահամ փաշայի և Վսեմ. Սարգիս պէյի կողմէ խոստացուած վիճանձնական առատաձեռնութեան շնորհն այս օրերս իւրագործուեր է, Քաղ. Ժողովոյ ատենապետ Վրսեմ. Սիմոն պէյի ձեռնօք, հետեւաբար. Պատրիարքարանի մէջ յատուկ մասնաժողով մը կազմուելով պարտապահանջները պիտի հրաւիրուին և իւրաքանչիւրին իրաւունքն իրեն հատուցուի :

Սեպտեմբ. 28 այդ երկու Ասեմախոհ բարերարք, որ իրենց երկնապարզ կարողութիւնն իրենց Ազգին և նմանեաց օգնելու կգործածեն այսպէս ազնուաբար, և իրենց անունն ու յիշատակը կանմահացնեն պատմութեան մէջ :

Մասիս Թիւ 4609, Նոյեմբ. 14.

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Տ Ա Ւ Ի Ո Յ Լ Ի Վ Օ Ր Ն Օ Գ Ա Ղ Ա Ք Ի Գ Ա Ղ Ք Ա Կ Ա Ր Հ Ա Յ Ո Ց Ա Ե Ր Ա Ս.

Ազգային պատմական կենաց հարցատիրութիւնն երբեմն այնպիսի յիշատակարաններ յերևան կհանէ որք կամ բոլորովին անծանօթ են մեր Ազգայնոց, կամ խիստ սակաւուց միայն ծանօթ :

Մինչդեռ մեր Տրամսիլլանիոյ Աեհաստանի և Հոռուգորիոյ մէջ Հայ Գաղթականաց տխուր հետքերն և կենդանի մնացորդներն նշմարելով կարտասուէինք և կը կարծէինք թէ Հայկական Գաղթականութեան հոսանքն միայն յիշեալ երկիրն